ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«24» մայիսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետի տեղակալ

_____ Հ. Այունց

ԳԲԽ-51/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Բետոնագործ» ՓԲԸ-ի 06.05.2016թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Բետոնագործ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Բետոնագործ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 06.05.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար շինանյութի ձեռքբերման նպատակով կազմակեպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/6» ծածկագրով շրջանակային

համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ի թիվս այլ ընկերությունների՝ էլեկտրոնային եղանակով Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Բետոնագործ» ՓԲԸ-ն: Ընկերությունը հայտի հետ միասին՝ ի թիվս այլ փաստաթղթերի, ներկայացրել է նաև թիվ 4 հավելվածը՝ գնի առաջարկը, որում նշվել է ապրանքների անվանումները, չափաբաժինների համարները, առաջարկվող ապրանքների գներն՝ ըստ չափաբաժինների, ինչպես նաև ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. մարտի 1-ի ժամը 11:00-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ հետագա գնահատման համար ընդունելի են համարվել մի շարք ընկերությունների ներկայացրած հայտեր, այդ թվում նաև՝ «Բետոնագործ» ՓԲԸ-ի ներկայացրած հայտը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով հարավերի 7.3 և 7.4 կետերը, 2016թ. մարտի 1-ի ժամը 12:00-ի թիվ 4 արձանագրության 2-րդ կետի 2.3-րդ մասի համաձայն՝ Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել՝ այն հիմնավորմամբ, որ Ընկերության էլեկտրոնային հայտում բացակայում է գնային առաջարկը և գնահատող հանձնաժողովը դրանք գնահատելու հնարավորություն չի ունեցել:

Ընկերությունը բողոքով հայտնել է նաև, որ 08.04.2016թ. Պատվիրատուի կողմից գրություն է ստացել, որում նշված է՝ «Հարգելի գործընկեր, հայտնում, ենք, որ Դուք Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել եք 1-ին տեղ զբաղեցնող (ամփոփաթերթը կցվում է)...»: Եվ պահանջվել է 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել համապատասխան փաստաթղթեր:

Ընկերությունը, որպես 1-ին տեղ զբաղեցնող, 12.04.2016թ. գնահատող հանձնաժողովին է ներկայացրել 2-րդ փուլով պահանջվող փաստաթղթերը, և սպասելով 3 աշխատանքային օր, փորձել է պարզել՝ թե ինչու գնահատող հանձնաժողովը չի պատասխանում Ընկերության կողմից ներկայացված գրությանը, որով ներկայացրել էր պահանջվող փաստաթղթերը, սակայն վերջինիս բանավոր կերպով տեղեկացրել են, որ Ընկերությունը չի հանդիսանում 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, քանի որ հայտում

բացակայում է գնային առաջարկը, այդ իսկ պատճառով Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերին չեն անդրադառնում:

Ընկերությունը 20.04.2016թ. թիվ 9 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Կենտրոն), որին ի պատասխան՝ 22.04.2016թ. թիվ 01/03.1/1630-16 գրությամբ, Կենտրոնը հայտնել է, որ դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը, վերջինս ուսումնասիրելով խնդիրը, տեղեկացրել է, որ Ընկերությունը լրացրել է հայտի բոլոր անհրաժեշտ տվյալները, սակայն չի նշել, թե որ չափաբաժնին է ցանկանում մասնակցել:

Այնուհետև Ընկերությունը ահազանգել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին: Ահազանգի հիման վրա Կենտրոնը դիմել է Պատվիրատուին, որին ի պատասխան՝ Պատվիրատուն հայտնել է, որ Ընկերությունը չի ներկայացրել էլեկտրոնային հայտ, հետևաբար նաև չի մասնակցել Ընթացակարգին, ավելացնելով, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրության մեջ նշվել է, որ հանձնաժողովը Ընկերության հայտը գնահատելու հնարավորություն չի ունեցել, ուստի Ընկերության հայտը մերժել է:

Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից թե անօրինական որոշման, թե անօրինական գործողության ու անգործության, և թե Ընթացակարգի խախտման հետևանքով սահմանափակվել է Ընկերության մասնակցությունը, խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի նպատակը («Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված), հնարավորություն չի տրվել Ընկերությանը մասնակցել Ընթացակարգին, («Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված), անհավասար մոտեցում է ցուցաբերվել Ընկերության նկատմամբ («Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդված), ինչպես նաև սխալ է գնահատվել վերջինիս ներկայացրած էլեկտրոնային հայտը («Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդված):

Ընկերությունը բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է.

1. դադարեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար շինանյութի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. մարտի 1-ի թիվ 4 արձանագրության 2.3-րդ կետով կայացված որոշումը,

2. այլ մասնակցի հետ պայմանագիր կնքված լինելու դեպքում գնման Ընթացակարգը հայտարարել ապօրինի,

3. կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել Պատվիրատուի և/կամ գնահատող հանձնաժողովի կողմից «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում կայացված ցանկացած այլ որոշման գործողությունը:

Ընկերությունը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրությունը անօրինական և անհիմն է, որով ոտնահարվում է Ընկերության իրավունքները:

Այսպիսով Ընկերությունը բողոքով հայտնել է, որ եթե անգամ Ընկերության կողմից չեն նշվել չափաբաժինները, որոնց ցանկանում են մասնակցել, միևնույն է՝ դա հայտի մերժման կամ այն չներկայացված համարելու հիմք չի հանդիսանում, քանի որ, որևէ իրավական ակտով սահմանված չէ, որ չափաբաժինը չնշելու դեպքում հայտը համարվում է չներկայացված:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 13.05.2016թ. ժամը 17:00-ին ԳԲԽ-51/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Բետոնագործ» ՓԲԸ-ն բողոքը պնդեց ամբողջությամբ:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 02.05.2016թ. թիվ ԴՎԱ/1160 գրությամբ՝ «Բետոնագործ» ՓԲԸ-ի կողմից 28.04.2016թ. Կենտրոնի թեժ գծին ստացված ահազանգի վերաբերյալ, հայտնել է, որ Ընկերությունը «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին չի ներկայացրել էլեկտրոնային հայտ, հետևաբար՝ նաև չի մասնակցել Ընթացակարգին:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրության 2.3-րդ կետով նշվել է, որ հանձնաժողովը Ընկերության հայտը գնահատելու հնարավորություն չի ունեցել, ուստի

հանձնաժողովը՝ հիմք ընդունելով հրավերի 7.3 և 7.4 կետերը, Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել:

Պատվիրատուն տեղեկացրել է նաև, որ armeps համակարգի՝ «հայտարարել գնահատման արդյունքները» քայլով ուղարկվել է «Շինանյութ» խմբով շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերի 2-րդ փուլով պահանջվող փաստաթղթերը, ինչ վերաբերվում է «Բետոնագործ» ՓԲԸ-ին, ապա գնումները համակարգողը տեղեկացրել է, որ Ընկերության հայտը armeps համակարգը չի ընդունել, և գնահատող հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել բացել և գնահատել այն, իսկ այդ ծանուցումը վերաբերվում է այն մասնակիցներին, որոնց չափաբաժինների մասով ներկայացրած առաջարկների համեմատության արդյունքում գնային առաջարկը համարվել է ամենացածրը, իսկ Ընկերության գնային առաջարկի բացակայության պատճառով չի համեմատվել:

Պատվիրատուն 06.05.2016թ. «Բետոնագործ» ՓԲԸ-ի կողմից ներկայացրած ԳԲԽ-51/16 բողոքի վերաբերյալ պնդել է, Կենտրոնի թեժ գծով 02.05.2016թ. թիվ ԴՎԱ/1160 գրությամբ ներկայացրած դիրքորոշումը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն նշել է, որ Ընթացակարգի գնահատող հանձաժողովի կողմից ՀՀ գնումների օրենսդրության պահանջների խախտումներ և սահմանափակումներ տեղի չեն ունեցել:

<u>3. ԳԲԽ-51/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-51/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար անհրաժեշտ շինանյութի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/6» ծածկագրով շրջանակային համա- ձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 7.3 կետի համաձայն՝

եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, **բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը** կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

3. «Բետոնագործ» ՓԲԸ-ն ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար անհրաժեշտ շինանյութի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով էլեկտրոնային հայտ է ներկայացրել:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.03.2016թ. թիվ 3 արձա- նագրության համաձայն՝ սահմանված ժամկետում www.armeps.am էլեկտրոնային համակարգում բեռնվել են 50 ընկերությունների կողմից ներկայացված հայտեր, որոնք սահմանված կարգով հաստատվել և ներկայացվել են գնահատման հաջորդ փուլ, այսինքն՝ www.armeps.am էլեկտրոնային համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. մարտի 1-ի ժամը 12:00-ի թիվ 4 արձանագրության 2-րդ կետի 2.3-րդ մասի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով հարավերի 7.3 և 7.4 կետերը, Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել՝ այն հիմնավորմամբ, որ Ընկերության էլեկտրոնային հայտում բացակայում է գնային առաջարկը և գնահատող հանձնաժողովը դրանք գնահատելու հնարավորություն չի ունեցել:

6. «Բետոնագործ» ՓԲԸ-ն 20.04.2016թ. թիվ 9 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ խնդրելով ուսումնասիրել Ընկերության կողմից՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով armeps համակարգի միջոցով ներբեռնած էլեկտրոնային հայտը:

7. Ի պատասխան «Բետոնագործ» ՓԲԸ-ի 20.04.2016թ. թիվ 9 գրության՝ Կենտրոնը 22.04.2016թ. 01/03.1/1630-16 գրությամբ Ընկերությանը հայտնել է, որ «Բետոնագործ» ՓԲԸ-ի կողմից նշված խնդրի լուծման համար Կենտրոնը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը, իսկ վերջինս տեղեկացրել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/6» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով «Բետոնագործ» ՓԲԸ-ի օգտատերը լրացրել է հայտի բոլոր անհրաժեշտ տվյալները, սակայն չի նշել, թե որ չափաբաժնին է ցանկանում մասնակցել:

8. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 20.05.2016թ. թիվ 04.1/5798-16 գրությամբ դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը՝ խնդրելով հայտնել, եթե հայտը ներբեռնելու ժամանակ Ընկերության կողմից չափաբաժինը չի նշվում, ապա ինչ տեսքով է Պատվիրատուն տեսնում մասնակցի հայտը:

9. 20.05.2016թ. թիվ 04.1/5798-16 գրությանն ի պատասխան՝ համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությունը տեղեկացրել է հետևյալը.

ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 5-ի N 1370-Ն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանվում է, որ էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների կատարման վերաբերյալ ուղեցույցը հաստատում է ՀՀ ֆինանսների նախարարը:

ՀՀ ֆինանսների նախարարի 10.01.2014թ. N 7-Ա հրամանով հաստատված «Էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների կատարման վերաբերյալ ուղեցույցի ՄԱՍ V-ի 1-ին կետի 7-րդ ենթակետով սահմանվում է, որ չափաբաժիններով ընթացակարգի դեպքում մասնակիցը «Հայտեր» դաշտում ընտրում է չափաբաժինը (չափաբաժինները), որին (որոնց) ցանկանում է մասնակցել:

Համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությունը տեղեկացրել է նաև, որ էլեկտրոնային գնումների ***armeps համակարգում հայտ***

ներկայացնող մասնակցի կողմից՝ չափաբաժիններով ընթացակարգի ժամանակ, չափաբաժինը չնշելու դեպքում ընթացակագրի պատվիրատուն տեսնում է միայն մասնակցի անունը:

4. ԳԲԽ-51/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Բետոնագործ» ՓԲԸ-ի 06.05.2016թ. ներկայացրած բողոքը, ՀՀ պաշտպանության նախարարության 02.05.2016թ. թիվ ԴՎԱ/1160 գրությունը, Կենտրոնի 23.05.2016թ. 03.1/5805/-16 գրությունը, հայտնում է հետևյալը.

«Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 31-ի N 1904-Ն որոշման մեջ լրացում կատարելու և Հաայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1916-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարությունը թիվ 1370-Ն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների կատարման վերաբերյալ ուղեցույցը հաստատում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

ՀՀ ֆինանսների նախարարի 7 Ա հրամանով հաստատված «Էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների կատարման» ուղեցույցի ՄԱՍ V-ի 1-ին կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ **չափաբաժիններով ընթացակարգի դեպքում մասնակիցը «Հայտեր» դաշտում ընտրում է չափաբաժինը (չափաբաժինները), որին (որոնց) ցանկանում է մասնակցել:**

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. մարտի 1-ի ժամը 12:00-ի թիվ 4 արձանագրության 2-րդ կետի 2.3-րդ մասի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով հարավերի 7.3 և 7.4 կետերը, Ընկերության հայտը գնահատել է անբավարար և մերժել՝ այն հիմնավորմամբ, որ **Ընկերության էլեկտրոնային հայտում բացակայում է գնային առաջարկը** և գնահատող հանձնաժողովը դրանք գնահատելու հնարավորություն չի ունեցել:

Կենտրոնը 22.04.2016թ. 01/03.1/1630-16 գրությամբ «Բետոնագործ» ՓԲԸ-ին հայտնել է, որ համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությունը տեղեկացրել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/6» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով «Բետոնագործ» ՓԲԸ-ի օգտատերը լրացրել է հայտի բոլոր անհրաժեշտ տվյալները, **սակայն չի նշել, թե որ չափաբաժնին է ցանկանում մասնակցել:**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 20.05.2016թ. թիվ 04.1/5798-16 գրությամբ դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը՝ խնդրելով հայտնել, եթե հայտը ներբեռնելու ժամանակ Ընկերության կողմից չափաբաժինը չի նշվում, ապա ինչ տեսքով է Պատվիրատուն տեսնում մասնակցի հայտը:

20.05.2016թ. թիվ 04.1/5798-16 գրությանն ի պատասխան՝ համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությունը հայտնել է, որ էլեկտրոնային գնումների armeps համակարգում հայտ ներկայացնող մասնակցի կողմից՝ չափաբաժիններով ընթացակարգի ժամանակ, ***չափաբաժինը չնշելու դեպքում ընթացակագրի պատվիրատուն տեսնում է միայն մասնակցի անունը:***

Այսպիսով Կենտրոնը արձանագրում է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-10/6» ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով «Բետոնագործ» ՓԲԸ-ն հայտը ներբեռնելիս, չի նշել, թե որ չափաբաժնին է ցանկանում մասնակցել:

Արդյունքում, ըստ համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպության, Պատվիրատուն տեսել է ***միայն մասնակցի անունը***, ուստի նման պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը օբյեկտիվորեն զրկված է եղել Ընկերության հայտը գնահատելու հնարավորությունից (փաստորեն, Ընկերության կողմից չափաբաժին չնշելու հետևանքով Պատվիրատուին տեսանելի չի եղել հայտին կցած ոչ մի փաստաթուղթ, այդ թվում նաև Ընկերության ներկայացրած գնային առաջարկը) և, հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 7.3 և 7.4 կետերը, հանձնաժողովը մերժել է «Բետոնագործ» ՓԲԸ-ի հայտը:

Նման պայմաններում, գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից չեն խախտվել գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք «Բետոնագործ» ՓԲԸի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 06.05.2016թ. ներկայացրած բողոքը մերժել:

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ51/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Գևորգյան